«Հրազդանի Էներգետիկ Կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ
2015Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)

Գլխավոր տնօրեն _____ Աշոտ Մանուկյան

ՀՐԱԶԴԱՆ - 2015

Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն Վ Ի Ճ Ա Կ Ի Մ Ա Ս Ի Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

առ 30 սեպտեմբերի 2015

(ամսաթիվ, ամիս, տարի)

հազար դրամ

ԱԿՏԻՎ	
I. Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	1,236,032
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	7,040
Ոչ նյութական ակտիվներ	3,593
Ներդրումային գույք	
Կենսաբանական ակտիվներ	
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	1,250,799
Հետաձգված հարկային ակտիվներ	
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	162,478
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**2,659,943**
II. Ընթացիկ ակտիվներ	
Հումք և նյութեր	147,455
Կենսաբանական ակտիվներ	
Անավարտ արտադրություն	
Արտադրանք	
Ապրանքներ	
Տրված ընթացիկ կանխավճարներ	8,199
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	2,933,319
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	107,931
Այլ դեբիտորական պարտքեր	687
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,926,113
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	425,415
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**8,549,120**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ	**11,209,063**
ՊԱՍԻՎ	
III. Սեփական կապիտալ	
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	7,813,350
Էմիսիոն եկամուտ	
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	103,008
Կուտակված շահույթ	(4,216)
Պահուստային կապիտալ	386,425
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	
Ընդամենը սեփական կապիտալ	**8,298,567**

IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	
Հետաձգված հարկային պարտավորություններ	
Ակտիվներին վերաբերող շնորհներ	
Ոչ ընթացիկ պահուստներ	
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	
V. Ընթացիկ պարտավորություններ	
Կարճաժամկետ բանկային վարկեր	
Կարճաժամկետ փոխառություններ	
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,531,075
Ստացված ընթացիկ կանխավճարներ	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	66,337
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	146
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	71,048
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	
Այլ կրեդիտորական պարտքեր	11,395
Եկամուտներին վերաբերող շնորհներ	
Հետաձգված եկամուտներ	
Ընթացիկ պահուստներ	230,496
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**2,910,496**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**11,209,063**

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01.01.2015թ. - 30.09.2015թ.

(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

հազար դրամ

Ցուցանիշի անվանումը	
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից հասույթ	12,869,668
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(12,315,470)
Համախառն շահույթ (վնաս)	**554,198**
Իրացման ծախսեր	(2,738)
Վարչական ծախսեր	(675,065)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	**(123,605)**
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	45,793
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	(45,406)
Գործառնական շահույթ (վնաս)	**(123,218)**
Ֆինանսական ծախսեր	
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	162,415
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը	**39,197**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(286,324)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	**(247,127)**
Ընդհատված գործունեության զուտ շահույթ (վնաս)	
Ընդամենը զուտ շահույթ (վնաս)	**(247,127)**
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատում	
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններ	
Այլ համապարփակ եկամուտներ (ծախսեր), այդ թվում՝	
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք	**(247,127)**
Ընդհանուր մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	
Ընդհանուր մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)*	
Շարունակվող գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	
Շարունակվող գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)*	

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01.01.2015թ. - 30.09.2015թ.
(հաշվետու տարին
(ժամանակաշրջանը))

հազար դրամ

Հոդվածները	II. Ընթացիկ տարի (ժամանակաշրջան)											
	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ				Էմիսիոն եկամուտ (վնաս)	Վերագնահատումից տարբերություններ	Վերաչափումից տարբերություններ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստային կապիտալ	Միջանկյալ շահաբաժիններ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
	Կանոնադրական կապիտալ	Չվճարված կապիտալ	Հետգնված կապիտալ	Զուտ գումար								
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014 թ.	7,813,350					103,008		242,911	386,425			8,545,694
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը												
Վերահաշվարկված մնացորդը	7,813,350					103,008		242,911	386,425			8,545,694
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)								(247,127)				(247,127)
Այլ համապարփակ եկամուտներ և ծախսեր												
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք												

Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝												
Շահաբաժիններ								( )	( )			
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում),այդ թվում՝												
Ներքին շարժեր, այդ թվում՝												0
Ընդամենը սեփականատերերի հետ գործառնություններից												
Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2015 թ.	**7,813,350**					**103,008**		**(4,216)**	**386,425**			**8,298,567**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01.01.2015թ. - 30.09.2015թ.

(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

հազար դրամ

Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	5,354,244
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	17,338,007
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	5,723
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	17,343,730
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	
Պաշարների, ապրանքների ձեռք բերման գծով	14,913,340
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	501,712
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	1,108,134
Վճարումներ բյուջե	1,282,435
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	490
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	25,385
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	17,831,496
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(487,766)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	63,441
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝	
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	63,441
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	3,823
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, փոխառությունների տրամադրումից	
Ներդրումային այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	3,823
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	59,618
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից	

Ստացված վարկերից և փոխառություններից	
Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝	
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	0
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	
Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	0
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(428,148)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ**	17
Ներքին շարժեր**	
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**4,926,113**

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ն հիմնադրվել է ՌԴ դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության առ 2004թ. սեպտեմբերի 1-ի N291-ռ կարգադրության համաձայն:

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն ստեղծվել է Հայաստանի կողմից Ռուսաստանի Դաշնությանը պետական պարտքի մարման դիմաց փոխանցված Հրազդանի ջերմային էլեկտրակայանի գույքային համալիրը ընկերության կանոնադրական կապիտալի մեջ ներառելով:

Ներկայում ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձ «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ» ԲԲԸ (հասցեն՝ ՌԴ, ք. Մոսկվա, Կրասնոպրեսնենսկայա նաբերեժնայա 12 շքամուտք 7): Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն, հաշվի օպերատոր՝ «Արմենբրոկ» ԲԲԸ:

Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 24.09.2004 թ., գրանցման համարն է 33.130.01678:

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը էլեկտրական էներգիայի և ջերմային էներգիայի արտադրությունն ու վաճառքն է, որն էլ հանդիսանում է շահույթի ստացման միակ աղբյուրը: Վառելիքի միակ մատակարարը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն է, իսկ արտադրանքի միակ սպառողը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն: Այս երկու գործընկերների ընտրության որոշման վրա կառավարման մարմինները որևէ ազդեցություն չունեն, քանի որ դրանք հանդիսանում են բնական մենաշնորհ:

Ընկերությունը 2007թ.-ի սկզբից ջերմային էներգիայի արտադրությամբ չի զբաղվում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ 01.08.2014թ.-ից Ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում սահմանվել է՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 36.925 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 1035.20 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 36.925 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ 01.08.2015թ.-ից Ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում սահմանվել է՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 42.93 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 1149.24 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 42.93 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

Ընկերության արտադրանքի ծավալի փոփոխությունները կապված է լինում Ընկերության միակ սպառողի մոտ ունեցած պահանջարկով: 2015 թ. առաջին ինը ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրության, առաքման, էլ. հզորության, սպառված գազի ծախսի չափերի և գների մասին ամփոփ տվյալներ ըստ ամիսների բերված է թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Էլեկտրաէներգիայի օգտակար առաքում, էլ. հզորություն և գազի ծախս 01.01.2015-30.09.2015թթ.

2015թ /Անիսներ/	Կազմակեր-պություն	Առաքված էլ. էներգիա (արտադրվածից)			Էլ. հզորություն			Ընդհանուր գումար	Կայանում արտա-դրված էլ. էներգիա կվտ.ժ	Ծախսված (ստացված) բնական գազ			Գնված էլ. էներգիա (արտադրական)		Գնված էլ. էներգիա (Գեղամա մ/ճ)		Մատուց-ված ծառայու-թյուն
		Դրույք	Քանակ կՎտ.ժ	Գումար	Դրույք դր/կՎտ/ամիս	Քանակ կՎտ.ամիս	Գումար			Քանակ նխմ	1000 խմ-ի գինը	Գումարը	Քանակ կվտ.ժ	Գումար	Քա-նակ կվտ.ժ	Գումար	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	14	15	16
I	«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ	36.925	75,915,048	2,803,178,330.41	1,035.204	400,000	414,081,600.00	**3,217,259,930.41**	82,762,153	25,315,475	127,216.914	3,220,556,605.94	935,882	29,428,259.70	502	18,748.7	4,028,863.20
II	«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ	36.925	66,165,528	2,443,175,354.51	1,035.204	400,000	414,081,600.00	**2,857,256,954.51**	72,304,920	21,687,402	130,463.120	2,829,406,129.61	756,923	23,861,088.55	412	15,452.2	3,522,583.20
III	«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ	36.925	35,968,680	1,328,150,702.74	1,035.204	335,480	347,290,237.92	**1,675,440,940.66**	39,360,091	11,493,413	132,595.866	1,523,979,050.03	700,196	22,068,234.60	414	15,535.9	3,450,086.40
IV	«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ	36.925		0.00	1,035.204	400,000	414,081,600.00	**414,081,600.00**					572,716	18,099,660.60	306	11,126.1	2,161,833.60
V	«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ	36.925	12,333,829	455,429,102.59	1,035.204	400,000	414,081,600.00	**869,510,702.59**	13,332,986	4,083,712	131,277.441	536,099,261.14	605,724	19,174,049.40	256	9,163.6	1,436,240.40
VI	«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ	36.925		0.00	1,035.204	400,000	414,081,600.00	**414,081,600.00**					436,515	13,727,881.75	201	7,211.85	1,991,852.40
VII	«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ	36.925	12,333,288	455,409,126.06	1,035.204	400,000	414,081,600.00	**869,490,726.06**	13,463,440	4,509,584	130,914.597	590,370,372.00	727,512	22,982,021.20	205	7,189.25	3,149,851.20
VIII	«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ	42.930	40,266,864	1,728,656,471.52	1,149.240	400,000	459,696,000.00	**2,188,352,471.52**	42,229,362	12,669,155	132,354.893	1,676,824,654.43	2,350,553	84,606,015.84	57	2,145.45	3,400,360.80
IX	«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ	42.930	58,905,792	2,528,825,650.56	1,149.240	333,330	383,076,169.20	**2,911,901,819.76**	60,266,427	17,922,857	134,188.501	2,405,041,314.47	3,908,348	140,636,489.44	241	10,235.98	3,083,574.00
«Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ			**301,889,029**	**11,742,824,738**		**3,468,810**	**3,674,552,007**	**15,417,376,745**									
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ը			**301,889,029**	**11,742,824,738**	-	**3,468,810**	**3,674,552,007**	**15,417,376,745**	**323,719,379**	**97,681,598**	-	**12,782,277,388**	**10,994,369**	**374,583,701**	**2,594**	**96,809**	**26,225,245**

Հաշվետու եռամսյակում Ընկերությունը հիմնականում աշխատել է:

Ընկերության աշխատելու հանգամանքը պայմանավորված է Հայաստանի ատոմակայանում տեղի ունեցած խափանումներով:

Ընկերության աշխատելու ինտենսիվությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. Նախ, Ընկերությունը հիմնականում աշխատում է այն ժամանակ, երբ Հայաստանի ատոմակայանը չի աշխատում:

2. Ընկերությունը ժամանակ առ ժամանակ դադարեցնում ու վերսկսում է իր գործունեությունը կապված 5-րդ էներգաբլոկի խափանման հետ:

Այն փոփոխությունները, որոնք կապված են Հայաստանի ատոմակայանի աշխատանքի ընդհատման և վերսկսման հետ, Ընկերությունը համարում է ոչ էական, բնականոն գործընթաց, և կարծում է, որ ողջամիտ ներդրողը չի կարևորի ներդրումային որոշումներ կայացնելիս: Իսկ «Հրազդան-5» կայանի շահագործումը կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության ֆինանսական արդյունքների վրա, քանի որ Ընկերությունը կաշխատի այն ժամանակ, երբ «Հրազդան-5» կայանը չի կարողանա բավարարել առկա պահանջարկը, բացառությամբ ատոմակայանի չաշխատելու դեպքի:

Ընկերությունն ունի հզորություն, որի համար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն իրեն վճարում է գումար:

Ներկայում Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 7,813,349,616 (յոթ միլիարդ ութ հարյուր տասներեք միլիոն երեք հարյուր քառասունինը հազար վեց հարյուր տասնվեց) ՀՀ դրամ, որը բաղկացած է 1,597,430 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսունյոթ հազար չորս հարյուր երեսուն) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսից: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4,891.2 (չորս հազար ութ հարյուր իննսունմեկ ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամ:

Ընկերության գործունեությունը կապված է որոշակի ռիսկային գործոնների հետ: Ստորև բերված են Ընկերությանն առընչվող կարևորագույն ռիսկերը, որոնց քանակն այսքանով չի սահմանափակվում:

ԱՄՆ դոլարի կուրսի տատանումը: Ընկերության արտադրության համար անհրաժեշտ «հումք» է հանդիսանում բնական գազը, իսկ վաճառքի առարկան՝ էլեկտրաէներգիան և հզորությունը: Նշված բոլորի գներն էլ որոշվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից: Սակայն գազի գնի որոշման բանաձևում հաշվի է առնված նաև ԱՄՆ դոլարի կուրսը, մինչդեռ մյուս երկու գործոններում վաճառքի գինը տրված է ՀՀ դրամով: Այդ պատճառով ԱՄՆ դոլարի գնի տատանումը կարող է էապես ազդել ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա:

«Հայռուսգազարդ» ՓԲԸ շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանի շահագործումը: 5-րդ էներգաբլոկը շահագործման է հանձնվել 2012 թ.-ի նոյեմբեր ամսին: Քանի որ Ընկերությունն աշխատում է ըստ էլեկտրաէներգիայի պահանջարկի, իսկ 5-րդ էներգաբլոկի հնարավորությունը բավարարում է առկա պահանջարկը, ուստի Ընկերությունը կաշխատի այն դեպքում, երբ 5-րդ էներգաբլոկի աշխատանքն ընդհատվի, օրինակ ինչ-որ տեխնիկական պատճառներով: Ընկերությունն ամեն դեպքում կաշխատի, եթե Հայաստանի ատոմակայանի աշխատանքն ընդհատվի:

Այս հանգամանքը Ընկերության համար էական է, քանի որ էլեկտրաէներգիայի արտադրությունն ու վաճառքը Ընկերության հիմնական գործունեությունն ու եկամտի աղբյուրն են:

Ընկերությունը կարող է վերադառնալ բնականոն գործունեություն, եթե Հայաստանն սկսի էլեկտրաէներգիա արտահանել:

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի հիմնական միջոցների կազմի մեջ չմտած 5-րդ էներգաբլոկի օդակոնդենսացման կայանքի (ՕԿԿ) օգտագործման անհնարինությունը. Ներկա դրությամբ ՕԿԿ-ի (Հելլերի հովարան) ռեսուրսի սպառման պատճառով

ամառվա ընթացքում պայմանական վառելիքի տեսակարար ծախսի կտրուկ բարձրացման պայմաններում առկա են էներգաբլոկների հզորությունների զգալի սահմանափակումներ (յուրաքանչյուր բլոկի վրա մինչև 110 ՄՎտ):

Այդ պատճառով էլեկտրակայանը ներկա դրությամբ լրացուցիչ օգտագործում է համեմատաբար վերջերս կառուցված հովարանը, ինչպես նաև կառուցվող 5-րդ էներգաբլոկի մի քանի այլ կառույցները և ինֆրակառուցվածքի մասերը:

5-րդ էներգաբլոկի կառուցման ավարտից և թողարկումից հետո «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն կընդհարվի վերոնշյալ հովարանի օգտագործման անհնարինության խնդրի հետ, որը կբերի կայանի էներգաբլոկների տնօրինվող հզորությունների կրճատմանը:

Միջնաժամկետ հեռանկարում տվյալ հարցի արմատական լուծման համար անհրաժեշտ է իրականացնել ՕԿԿ-ի (Հելլերի հովարանի, հունգարական արտադրության) նորոգումը և արդիականացումը:

Ծխնելույզի բարոյական և ֆիզիկական մաշվածությունը. «Պրոմէկսպերտիզա» ՏԿ ՍՊԸ-ի (ք. Ստարիյ Օսկոլ) կողմից ծխնելույզի ներքին զննության կատարումը բացահայտեց 180մ նիշում թույլ թասակների տեղադրման և ներպատման նորոգման անհրաժեշտությունը:

Ֆորս-մաժորային հանգամանքների ծագման ռիսկի պահպանվելը, կապված բնական գազի Հայաստան մղման լրիվ ընդհատման հետ. Բնական գազի մղումը էլեկտրակայան իրականացվում է Վրաստանի տարածքով անցնող Մոզդոկ(ՌԴ)-Հայաստան մագիստրալային գազամուղից: 2005-2007թթ. գրանցվել են տվյալ խողովակների շարքից դուրս գալու դեպքեր՝ զուգորդված էլեկտրակայնի գազամատակարարման դադարեցմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ Աբովյանի բնական գազի պահեստարանը (Հայաստանում միակը) տեղավորում է առավելագույնը 80-90 մլն. խմ գազ, իսկ չնվազող մնացորդը կազմում է մոտավորապես 10-15 մլն. խմ: «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից 43 մլն. 547 հազար խմ ծավալով գազի պահեստավորումը մեր կարծիքով հնարավոր չէ, քանի որ մայրուղային գազատարի վրա պատահած վթարային իրավիճակների դեպքում Հայաստանի կառավարությունը այդ պահեստարանում գտնվող բնական գազի ամբողջ պահուստը կբաշխի ռազմավարական անհրաժեշտությանը համաձայն:

Միևնույն ժամանակ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի համար սակագինը հաստատելիս այդ ծախսերը չի ներառում որպես սակագնի հաշվառման բաղադրիչ, ինչը թույլ չի տալիս «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ին ծախսել միջոցներ պահուստը ձևավորելու համար:

Բնական գազի մատակարարումը դադարեցնելու դեպքում հիմնական վտանգը հանդիսանում է սարքավորման փչանալու հնարավորությունը՝ ձմռանը սեփական կարիքների համար ջերմային էներգիայի արտադրության դադարեցման կապակցությամբ: 2008թ-ին ընկերության ուժերով կատարված է ոչ բլոկային մասի կաթսայի ձևափոխություն, ինչն ապահովում է միայն ջերմային էներգիայի արտադրությունը բնական գազի նվազագույն ծախսերով ֆորս-մաժորային իրավիճակում: Նաև ձեռք է բերվել պայմանավորվածություն ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հետ ֆորս-մաժորային իրավիճակի առաջացման ժամանակահատվածում գազի պահեստարաններից նվազագույն ծավալի գազով կայանը մատակարարելու վերաբերյալ:

Էլեկտրաէներգիայի առաքման լրիվ բացակայությունը հարևան երկրներ. Կայանի հուսալի և տնտեսապես շահավետ աշխատանքի կարևոր բաղադրիչ է հանդիսանում էլեկտրաէներգիայի շուրջամյա արտահանումը հարևան երկրների (Վրաստան, Թուրքիա, Իրան, հեռանկարում՝ Իրաք, Աղվանստան) բարձր պահանջարկ ունեցող շուկաներ:

Թուրքիայի և Հայաստանի միջև քաղաքական հարցերի կարգավորման դեպքում «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն կարող է կազմակերպել էլեկտրաէներգիայի շուրջամյա առաքում Թուրքիա մինչև 200 ՄՎտ հզորությամբ համեմատաբար հարթ օրական ժամանակացույցով՝ խուսափելով ցերեկային գագաթնային բեռնավորումներից և գիշերային խորը բեռնաթափումներից:

Հայաստանում մակրոէկոնոմիկ իրավիճակի փոփոխությունը (փոխարժեքի հնարավոր աճը). Ընկերության գործունեության հիմնական վտանգներից մեկը 2015թ-ին հանդիսացել է մակրոէկոնոմիկ իրավիճակի փոփոխությունը, մասնավորապես ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճը հայկական դրամի նկատմամբ: ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճը բերում է

բնական գազի վրա ծախսերի զգալի մեծացման (քանի որ բնական գազի սակագինը սահմանվում է ԱՄՆ դոլարով), հաշվեկշռային շահույթի նվազմանը և, համապատասխանաբար, ընկերության նախատեսվող եկամուտների նվազմանը:

Ընկերությունը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի նվազեցնի ստորև նշված ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության հսկողությունից դուրս են, ապա այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

Նշված գործոններն իրենց անորոշությամբ էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

2015թ. հունիսի 30-ին «Հրազդանի Էներգետիկ Կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ միակ բաժնետիրոջ՝ «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ» հասարակական բաժնետիրական ընկերության կողմից ընդունվել է թիվ 2/15 որոշումը, որով հավանություն է տրվել «Հրազդանի Էներգետիկ Կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ թողարկված բաժնետոմսերի՝ Հայաստանի Հանրապետության կարգավորվող շուկայում առևտրի դադարեցմանը: 2015թ. սեպտեմբերի 23-ից Ընկերության սովորական բաժնետոմսերի առևտուրը կասեցվել է և դադարեցվել է դրանց շրջանառությունը ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի բաժնետոմսերի ազատ շուկայում:

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում:

Աղյուսակ 2

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 01.01.2015-30.09.2015թթ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	12,869,668
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-12,315,470
Վարչական ծախսեր	-675,065
Իրացման ծախսեր	-2,738
Այլ գործառնական եկամուտ	45,793
Այլ գործառնական ծախսեր	-45,406
2015թ. 1-3 եռամսյակների շահույթ	39,197
Շահութահարկի գծով ծախս	-286,324
2015թ. 1-3 եռամսյակների զուտ շահույթ	-247,127
Դեբիտորական պարտք	3,050,137
Կրեդիտորական պարտք	2,910,496

Աղյուսակ 3

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 01.01.2015-30.09.2015թթ.

Ցուցանիշի անվանումը	01.10.2015 թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-
Զուտ շահույթի մարժա (NPM)	-

Ցուցանիշի անվանումը	01.10.2015 թ.
Կապիտալի համարժեքության գործակից	74.03 %
Ֆինանսական կախվածության գործակից	35.07 %
Բացարձակ իրացվելության գործակից	1.69
Ընթացիկ իրացվելության գործակից	2.74
Ընդհանուր իրացվելության գործակից	2.94
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	5.20
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	70.16
Պաշարների շրջանառելիության գործակից	74.39
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	4.91
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	4.42
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	82.61

Ընկերության աշխատավարձի ֆոնդը հաշվետու եռամսյակում կազմել է 161,473,962 դրամ (հուլիս), 145,309,779 դրամ (օգոստոս) և 145,607,717 դրամ (սեպտեմբեր): Աշխատողների միջին թվաքանակը հաշվետու եռամսյակում կազմել է 639 հոգի (ըստ հաստիքացուցակի և պայմանագրային):

2) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվում է, որ Ընկերությունը կաշխատի, բացառությամբ դեկտեմբեր ամսի:

Ընկերությունը նախատեսում է, որ հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում հզորության վաճառքը կշարունակվի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Դմիտրիյ Վոլկով	Տնօրենների խորհրդի նախագահ	Տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար
Աշոտ Մանուկյան	Տնօրենների խորհրդի անդամ, Գլխավոր տնօրեն	Ընթացիկ գործունեության համար
Դմիտրիյ Կուզնեցով	Տնօրենների խորհրդի անդամ	-
Եվգենիյ Միրոշնիչենկո	Տնօրենների խորհրդի անդամ	-
Ալեքսանդր Մատվեև	Տնօրենների խորհրդի անդամ	-
Ալեքսանդր Պախոմով	Տնօրենների խորհրդի անդամ	-
Աշոտ Ավետիսյան	Գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինան-սական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար